Արեստակես Ս. Սիմավորյան[1]

Կոսովոյի ռազմականացումը Թուրքիայի բալկանյան քաղաքականության համատեքստում

Փորձագետի տեսակետ 15.10.2025 թ.

Առաջաբան

Վերջին երկու տասնամյակի ընթացքում Բալկանները և, մասնավորապես, Կոսովոն Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ զբաղեցնում են յուրահատուկ միջանկյալ դիրք: Այդ դիրքը գտնվում է Անկարայի «*նեոօսմանական*» գաղափարախոսության[2], *նեոռեալիստական հաշվարկների*[3] և «*փափուկ ուժի*»[4] դիվանագիտության հատման կետում՝ դառնալով այս երեք մոտեցումների համադրման օրինակ:

Այս համատեքստում, Կոսովոյի ռազմականացման գործընթացը վերջին տարիներին Թուրքիայի անմիջական մասնակցությամբ արագացել է: Անկարան, օգտագործելով ՆԱՏՕ-ի իր անդամության գործոնը, նպատակ ունի Կոսովոն վերածել Բալկանյան տարածաշրջանի իր ռազմական և քաղաքական հենման դիրքերից մեկը: Այս գործընթացն արտահայտվում է Կոսովո՝ թուրքական ռազմական սպառազինությունների բացահայտ «ներթափանցմամբ», հատկապես՝ ԱԹՍ-ների, հակատանկային համակարգերի, *Otokar Land Rover, BMC Vuran, Otokar Cobra* զրահամեքենաների և գրոհային/դիպուկահար հրացանների մատակարարմամբ, ռազմական պատրաստության ծրագրերով և տեղական բանակային կառույցների վերակազմակերպմամբ:

Կոսովոն որպես քաղաքական փորձաքար

Կոսովոյի հետ ԱԹՍ-ների հետ կապված վերջին գործարքը և ռազմական նշանակության այլ սպառազինությունների արտահանումները խորքային առումով մարտահրավեր է ոչ միայն Սերբիայի համար, այլև ազդակ է Արևմուտքին, որ Անկարան

---

[1] Արևելագետ, թուրքագետ: 2008–2019 թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում որպես Հայագիտական կենտրոնի ղեկավար, 2014-2021 թթ.՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն»-ի գիտաշխատող: 2019–2021 թթ. աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վերլուծական ծառայության» բաժնում որպես ավագ փորձագետ: 2021-2022 թթ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի «Գիտահետազոտական աշխատանքների և միջազգային կապերի բաժնի» գլխավոր արխիվագետ: 100-ից ավելի գիտավերլուծական հոդվածներիև 12 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

[2] Simavoryan, A. (2010). Ideological Trends in the Context of Foreign Policy of Turkey. *Europe&Orient*, (11), 55-62. https://hal.science/hal-03232994/ (բեռնման օրը՝ 13.10.2025).

[3] Սիմավորյան, Ա. (2012). Թուրքական «խորքային ռազմավարության» տեսությունը, *Գլոբուս Ազգային անվտանգություն*, թիվ 1, էջ 17, https://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6263 (բեռնման օրը՝ 13.10.2025):

[4] Dinçer, M. (2022). Türkiye'nin Kosova'daki Yumuşak Gücü. *Çankırı Karatekin Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi*, *12*(1), 326-362. https://dergipark.org.tr/tr/pub/ckuiibfd/issue/70935/1089652 (բեռնման օրը՝ 13.10.2025).

ձգտում է դառնալ առանցքային խաղացող եվրոատլանտյան անվտանգության ենթահամակարգում՝ սեփական օրակարգով և ռազմավարական ինքնուրույնությամբ: Եվ ի վերջո, Անկարայի ակտիվությունը ոչ միայն իրեն հնարավորություն է տալիս արտահանելու ռազմական տեխնոլոգիաներ, այլև իր դաշնակիցների պաշտպանական համակարգերում ներդնելու սեփական ստանդարտները:

2025 թ. հոկտեմբերին թուրքական *Baykar* պաշտպանական կապալառու ընկերության հետ կնքված պայմանագրով հազարավոր *Skydagger* կամիկաձե ԱԹՍ-ների մատակարարումը Կոսովո վերակենդանացրեց Թուրքիայի և Սերբիայի միջև նախկինում արձանագրված հակասությունները: Սերբիայի նախագահ Ա. Վուչիչը սկզբնական հայտարարությունում հանդես եկավ կտրուկ քննադատությամբ՝ մեղադրելով Անկարային *«Օսմանյան կայսրության վերականգնման»* մտադրությունների մեջ, սակայն, շատ չանցած, մեղմեց իր դիրքորոշումը՝ բնութագրելով Ռ. Թ. Էրդողանին որպես *«մեծ առաջնորդ»* և շեշտելով Թուրքիայի հետ *«ամենամերձ հարաբերությունների»* անհրաժեշտությունը[5]:

Ի դեպ, Թուրքիայի ՊՆ-ը չի արձագանքել Սերբիայի պաշտոնական հայտարարություններին: Այնուամենայնիվ, Անկարայի պաշտոնյաները շարունակաբար ընդգծում են, որ ռազմական արտահանումները լիովին օրինական են և իրականացվում են միջազգային իրավունքի շրջանակում: Նրանց գնահատմամբ՝ «*Սերբիայի կողմից զենքի մատակարարումը Կիպրոսի հունական վարչակազմին՝ մի կառույց, որը Թուրքիան չի ճանաչում որպես Կիպրոսի Հանրապետություն, ստեղծում է նախադեպ, որի նույն սկզբունքը պետք է տարածվի նաև Թուրքիայի տարածաշրջանային վաճառքների վրա*»[6]:

Փաստորեն, Անկարան օգտագործում է դիվանագիտական-պաշտպանական մի հռետորաբանություն, որով փորձում է Սերբիայի նախադեպը վերածել սեփական քաղաքականության օրինականացման գործիքի: Քաղաքական առումով սա *«հայելային սկզբունքի»* կիրառություն է՝ ինչ թույլատրվում է մեկին, պետք է թույլատրվի մյուսին: Սակայն, այս տրամաբանությունը համարժեք չէ, որովհետև երկու դեպքերի իրավաքաղաքական հիմքերը տարբեր են. Կոսովոն Արևմուտքի աջակցությամբ իրեն հռչակել է որպես անկախ պետություն՝ խախտելով Սերբիայի տարածքային ամբողջականությունը, իսկ Կիպրոսը բռնազավթվել է Թուրքիայի նվաճողական գործողությունների շնորհիվ:

Անկարա-Բելգրադ հարաբերությունների համատեքստը

Անկախ առկա տարաձայնություններից, անցած տասնամյակում Թուրքիան և Սերբիան կառուցել են հարաբերությունների այնպիսի ձևաչափ, որին բնորոշ է

[5] Sırbistan Cumhurbaşkanı Vucic: Türkiye'nin Kosova'ya drone teslimatı Sırbistan'ın menfaatlerine aykırı. *Egealternatif*. 09.10.2025. https://www.egealternatif.com/haber/sirbistan-cumhurbaskani-vucic-turkiye-nin-kosova-ya-drone-teslimati-sirbistan-in-menfaatlerine-aykiri_42112/ (բեռնման օրը՝ 13.10.2025).

[6] Erdogan's family-linked drone exports spark tensions with Serbia. *Nordicmonitor*. 10.10.2025. https://nordicmonitor.com/2025/10/erdogans-family-linked-drone-exports-stir-tensions-with-serbia/ (բեռնման օրը՝ 13.10.2025).

քաղաքական պրագմատիզմը, որը, սակայն, անթաքույց ուղեկցվում է ռազմավարական անվստահությամբ: Մյուս կողմից՝ Անկարայի հետ տնտեսական կապերի խորացումը և պաշտպանական ոլորտում երկկողմ շփումները, կարծես, նախանշում են, որ Բելգրադը հարմարվել է իր հանդեպ Թուրքիայի որդեգրած արտաքին քաղաքական օրակարգին:

Ինչպես վերը նշեցինք, Անկարա–Բելգրադ հարաբերություններում միշտ են գրանցվել լարվածություններ: Դեռևս 2013 թ. Կոսովոյի հարավում գտնվող Պրիզրեն քաղաք կատարած այցի ժամանակ *«Մի մոռացե՛ք, Թուրքիան Կոսովո է, Կոսովոն՝ Թուրքիա»*[7] Էրդողանի արտահայտությունը սուր բացասական արձագանք գտավ Սերբիայում[8]: Սակայն 2014-ից լարվածությունը մեղմացավ, իսկ հարաբերությունների բեկումնային պահը եղավ 2016 թ. ձախողված հեղաշրջման փորձից հետո: Սերբիան անմիջապես դատապարտեց հեղաշրջման փորձը և փակեց Ֆ. Գյուլենի հետ կապված հաստատությունները:

Այդ ամենից հետո, 2017 թ. կողմերը ստեղծեցին Բարձր մակարդակի համագործակցության խորհուրդ, իսկ 2019 թ. Թուրքիան և Սերբիան ստորագրեցին ռազմական համագործակցության շրջանակային համաձայնագիր, որը նախատեսում էր համատեղ զորավարժություններ և ուսումնական ծրագրերի կազմակերպում: Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը վերջին անգամ Բելգրադ այցելեց 2024 թ. հոկտեմբերին, որի ընթացքում ստորագրվեցին առևտրի, էներգետիկայի և անվտանգության ոլորտների վերաբերյալ 11 նոր համաձայնագրեր:

Հատկանշական է, որ 2019-ից հետո, երբ համագործակցությունը աստիճանաբար տեղափոխվեց պաշտպանական ոլորտ, սերբական կողմը հետաքրքրություն ցուցաբերեց *Bayraktar TB2* անօդաչուների ձեռքբերման հարցում, սակայն, երբ Կոսովոն նույն տեխնոլոգիաները գնեց՝ հրաժարվեց այդ մտքից: Այս դրվագը բացահայտեց նրանց միջև եղած վստահության սահմանները և Անկարա–Բելգրադ հարաբերություններում առկա փխրուն հավասարակշռությունը:

Կոսովոյի հարցերի շուրջ քաղաքական մակարդակում կողմերը հաճախ են հայտնվում հակադիր դիրքերում, մինչդեռ տնտեսության ոլորտում իրավիճակը մի փոքր այլ է: Երկկողմ ապրանքաշրջանառությունը 2010 թ.-ից ի վեր աճել է ավելի քան հնգապատիկ անգամ՝ 2023 թ. կազմելով շուրջ $2.3 մլրդ: Ավելի քան 1000 թուրքական ընկերություններ են գործում Սերբիայում՝ ընդգրկված լինելով թեթև և տեքստիլ արդյունաբերության, ավտոպահեստամասերի արտադրության և շինարարության ոլորտներում: Վերջին 10 տարում Թուրքիան Սերբիայում կատարել է $400 մլն-ի ներդրումներ[9]: Ի դեպ, թուրքական

[7] Erdoğan bugün Thaçi ile görüşecek. *KOHA*, 28.12.2016, https://koha.mk/tr/erdogan-sot-pret-thacin/ (բեռնման օրը՝ 13.10.2025).

[8] Levent Kenez. Erdogan 'Misunderstood' Over 'Turkey is Kosovo' Claim. *BalkanInsight*, 13.10.2013, https://balkaninsight.com/2013/10/28/davutoglu-erdogan-s-kosovo-statement-misinterpreted/ (բեռնման օրը՝ 13.10.2025).

[9] Yunus Türk. Türkiye ile Sırbistan arasındaki ticaret hacminde hedef 5 milyar dolar. *Anadolu Ajansı*, 16.06.2024, https://www.aa.com.tr/tr/ekonomi/turkiye-ile-sirbistan-arasindaki-ticaret-hacminde-hedef-5-milyar-dolar/3251347 (բեռնման օրը՝ 13.10.2025).

կապիտալը հիմնականում ուղղված է Սերբիայի թերզարգացած շրջաններին, որտեղ նոր գործարանների բացումը, ինչպես նշում են սերբ փորձագետները, ծառայել է որպես Վուչիչի ներքաղաքական հեղինակության ամրապնդման գործիք:

Հատկապես կարևոր են դարձել թուրքական շինարարական ընկերությունների նախագծերը՝ Բելգրադ–Սարաևո ավտոմայրուղու կառուցումը[10] և Նովի Բազար–Տուտին ճանապարհի վերակառուցումը[11], որոնք ունեն ոչ միայն տարածաշրջանային ինտեգրման նշանակություն: Վերոհիշյալ նոր մայրուղիները ապագայում կարող են դառնալ որպես լոգիստիկ հիմք՝ թուրքական բիզնեսի և, նույնիսկ, պաշտպանական արտադրանքի արտահանման համար դեպի Բոսնիա, Մոնտենեգրո և Հյուսիսային Մակեդոնիա:

Տնտեսական իմաստով սա ԵՄ շուկա տանող նոր առևտրային ուղի է, որը Թուրքիան փորձելու է օգտագործել որպես այլընտրանք Դանուբյան և արևմտաեվրոպական միջանցքներին: Տնտեսականից զատ, Թուրքիան ձգտում է նաև լինել միջնորդ Բոսնիայի և Սերբիայի հարաբերություններում, ուստի Բելգրադ–Սարաևո մայրուղու քաղաքական նշանակությունն ակնհայտ է. այն Անկարայի խոսույթում ներկայացվում է որպես «*խաղաղության ճանապարհ*»: Թուրքիայի տնտեսական նման ակտիվությունը կարելի է նաև բացատրել Բալկանների կրիտիկական համարվող ենթակառուցվածքներում ԵՄ-ի թույլ ֆինանսավորմամբ և ռազմավարական դանդաղկոտությամբ, որից էլ օգտվում են ոչ լավ ժամանակներում ապրող Թուրքիայի գործարար շրջանակները:

Անկարա–Պրիշտինա հարաբերությունների վերածևումը

2008 թ. ԱՄՆ-ից հետո Թուրքիան Կոսովոյի անկախությունը ճանաչած երկրորդ պետությունն էր: Երկրամասի անկախացումից հետո Անկարան արագորեն ամրապնդեց իր դիրքերն այդ կազմավորման տնտեսության տարբեր ոլորտներում: Թուրքական ներդրումները տարածվեցին բանկային, կապի, էներգետիկ և լոգիստիկ (օդանավակայան, մայրուղիներ) համակարգերում[12]: Նույն տարեթվին էլ Թուրքիայի Արտաքին տնտեսական հարաբերությունների խորհրդի (DEIK) շրջանակներում հիմնադրվեց Թուրքիա–Կոսովո գործարար խորհուրդը:

[10] Sergio Cantone. Can a motorway to Bosnia strengthen the ties between Serbia and Turkey? *Euronews*, 14.10.2024, https://www.euronews.com/2024/10/14/can-a-motorway-to-bosnia-strengthen-the-ties-between-serbia-and-turkey (բեռնման օրը՝ 13.10.2025).

[11] Turkish contractor signs $27M deal to repair southern Serbia highway. *Daily Sabah*, 29.10.2018, https://www.dailysabah.com/economy/2018/10/29/turkish-contractor-signs-27m-deal-to-repair-southern-serbia-highway (բեռնման օրը՝ 13.10.2025).

[12] Ավելի մանրամասն տես, Kosova'da İş Yapan Türk Firmaları. *Living in Kosova*, 05.05.2025, https://www.livinginkosova.com/sirket/kosovada-is-yapan-turk-firmalari/ (բեռնման օրը՝ 13.10.2025).

Ի համեմատ Սերբիայի՝ Թուրքիա–Կոսովո երկկողմ առևտուրն ավելի համեստ վիճակագրություն ունի՝ 2023 թ. դրությամբ այն կազմում էր $785 միլիոն, իսկ թուրքական ընկերությունների ներդրումները Կոսովոյում 2023 թ. դրությամբ հասել են €429 միլիոնի[13]:

Ինչ վերաբերում է 2 երկրների քաղաքական հարաբերություններին, ապա 2016–2018 թթ. երկկողմ հարաբերություններում առաջացան ճգնաժամեր[14], չնայած նրան, որ հատկապես նախագահ Հաշիմ Թաչիի հետ Էրդողանն ուներ սերտ հարաբերություններ: Հ. Թաչիի պաշտոնավարման տարիներին Անկարան Պրիշտինայում վայելում էր վստահելի գործընկերոջ ներկայություն, սակայն նրա հրաժարականից հետո Թուրքիան անցավ ինստիտուցիոնալ ներգրավման մոդելի, որի շրջանակում համագործակցությունը հիմնականում ծավալվեց ՆԱՏՕ-ի և երկկողմ պաշտպանական ուղիներով:

Ռուսաստան–Ուկրաինա պատերազմի սրացումից հետո Անկարան 2023 թ. լրացուցիչ զորքեր ուղարկեց Կոսովոյում տեղակայված ՆԱՏՕ-ի *KFOR* խաղաղապահ առաքելությանը: Ի դեպ, 2025 թ. հոկտեմբերի 3-ից Թուրքիան մեկ տարով ստանձնել է Կոսովոյում ՆԱՏՕ-ի խաղաղապահ առաքելության հրամանատարությունը[15]: 2024 թ. Կոսովոյի հետ պաշտպանական՝ ներառյալ անօդաչուների, ռազմական մեքենաների արտահանումները և զինամթերքի արտադրության ոլորտում համաձայնագրերը[16] փաստացի վերածևեցին Թուրքիայի ազդեցությունը՝ քաղաքականից դեպի ռազմատեխնիկականի:

Գալով Կոսովոյի հարցի վերաբերյալ գնահատականներին արձանագրենք, որ, ինչպես նշում են որոշ փորձագետներ, Ա. Վուչիչի ներքաղաքական օրակարգում այն հանդիսանում որպես «*կարմիր գիծ*», և հատկապես բողոքի շարժումների և ժողովրդական դժգոհության աճի ֆոնին վերջինս հաճախ է դիմում Կոսովոյի թեմային՝ ազգային համախմբման և լեգիտիմության ամրապնդման նպատակով[17]:

Այնպես որ թուրքական ԱԹՍ-ների մատակարարման շուրջ բարձրացված հռետորաբանությամբ, ըստ ամենայնի, նախագահ Վուչիչը նպատակ ուներ արտաքին լարվածությունը վերածել ներքին համախմբման գործիքի՝ առանց Անկարայի հետ հարաբերությունների խորքային խզման մտադրության:

---

[13] Fatma Eda Topcu. Türkiye targets $1B in bilateral trade with Kosovo. *Anadolu Agency*, 03.06.2024, https://www.aa.com.tr/en/turkiye/turkiye-targets-1b-in-bilateral-trade-with-kosovo/3238792 (բեռնման օրը՝ 13.10.2025).

[14] Sena Guler. Erdogan: Who told Kosovo's PM to protect terrorists? *Anadolu Agency*, 31.03.2018, https://www.aa.com.tr/en/europe/erdogan-who-told-kosovos-pm-to-protect-terrorists/1104880# (բեռնման օրը՝ 13.10.2025).

[15] Eren Beksaç.Turkish unit completes deployment to Kosovo under NATO mission. *Anadolu Agency*, 29.09.2025, https://www.aa.com.tr/en/europe/turkish-unit-completes-deployment-to-kosovo-under-nato-mission/3702212 (բեռնման օրը՝ 13.10.2025).

[16] Kosovo, Türkiye's MKE ink deal to establish ammunition factory. *Daily Sabah*, 18.12.2024, https://www.dailysabah.com/business/defense/kosovo-turkiyes-mke-ink-deal-to-establish-ammunition-factory (բեռնման օրը՝ 13.10.2025).

[17] Laszlo Szerencses. Turkey's Drone Sales to Kosovo Test its Friendship with Serbia. *BalkanInsight*, 10.10.2025, https://balkaninsight.com/2025/10/10/turkeys-drone-sales-to-kosovo-test-its-friendship-with-serbia/ (բեռնման օրը՝ 14.10.2025).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Simavoryan, A. (2010). Ideological Trends in the Context of Foreign Policy of Turkey. *Europe&Orient*, (11), 55-62. https://hal.science/hal-03232994/
2. Սիմավորյան, Ա. (2012). Թուրքական «խորքային ռազմավարության» տեսությունը, *Գլոբուս Ազգային անվտանգություն*, թիվ 1, էջ 17, https://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ ID=6263
3. Dinçer, M. (2022). Türkiye'nin Kosova'daki Yumuşak Gücü. *Çankırı Karatekin Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi*, *12*(1), 326-362. https://dergipark.org.tr/tr/pub/ckuiibfd/issue/70935/1089652
4. Sırbistan Cumhurbaşkanı Vucic: Türkiye'nin Kosova'ya drone teslimatı Sırbistan'ın menfaatlerine aykırı. *Egealternatif*, 09.10.2025, https://www.egealternatif.com/haber/sirbistan-cumhurbaskani-vucic-turkiye-nin-kosova-ya-drone-teslimati-sirbistan-in-menfaatlerine-aykiri_42112/
5. Erdogan's family-linked drone exports spark tensions with Serbia. *Nordicmonitor*, 10.10.2025, https://nordicmonitor.com/2025/10/erdogans-family-linked-drone-exports-stir-tensions-with-serbia/
6. Levent Kenez. Erdogan 'Misunderstood' Over 'Turkey is Kosovo' Claim. *BalkanInsight*, 13.10.2013, https://balkaninsight.com/2013/10/28/davutoglu-erdogan-s-kosovo-statement-misinterpreted/
7. Kosova'da İş Yapan Türk Firmaları. *Living in Kosova*, 05.05.2025, https://www.livinginkosova.com/sirket/kosovada-is-yapan-turk-firmalari/
8. Kosovo, Türkiye's MKE ink deal to establish ammunition factory. *Daily Sabah*, 18.12.2024, https://www.dailysabah.com/business/defense/kosovo-turkiyes-mke-ink-deal-to-establish-ammunition-factory
9. Laszlo Szerencses. Turkey's Drone Sales to Kosovo Test its Friendship with Serbia. *BalkanInsight*, 10.10.2025, https://balkaninsight.com/2025/10/10/turkeys-drone-sales-to-kosovo-test-its-friendship-with-serbia/
10. Fatma Eda Topcu. Türkiye targets $1B in bilateral trade with Kosovo. *Anadolu Agency*, 03.06.2024, https://www.aa.com.tr/en/turkiye/turkiye-targets-1b-in-bilateral-trade-with-kosovo/3238792
11. Eren Beksaç.Turkish unit completes deployment to Kosovo under NATO mission. *Anadolu Agency*, 29.09.2025, https://www.aa.com.tr/en/europe/turkish-unit-completes-deployment-to-kosovo-under-nato-mission/3702212
12. Sena Guler. Erdogan: Who told Kosovo's PM to protect terrorists? *Anadolu Agency*, 31.03.2018, https://www.aa.com.tr/en/europe/erdogan-who-told-kosovos-pm-to-protect-terrorists/1104880#
13. Sergio Cantone. Can a motorway to Bosnia strengthen the ties between Serbia and Turkey? *Euronews*, 14.10.2024, https://www.euronews.com/2024/10/14/can-a-motorway-to-bosnia-strengthen-the-ties-between-serbia-and-turkey
14. Erdoğan bugün Thaçi ile görüşecek. *KOHA*, 28.12.2016, https://koha.mk/tr/erdogan-sot-pret-thacin/
15. Turkish contractor signs $27M deal to repair southern Serbia highway. *Daily Sabah*, 29.10.2018, https://www.dailysabah.com/economy/2018/10/29/turkish-contractor-signs-27m-deal-to-repair-southern-serbia-highway